

Եագուպիէի մասին օտար նոր ուղեգիրներէն տեղեկութիւն մը չունինք. բայց չեմ կրնար անտես ընել Վըրզպըրկի Յովհաննէս եպիսկոպոսի մէկ ծանօթագրութիւնը (Tobler, էջ 160). յիշեալ եպիսկոպոսը Դաւթի աշտարակին դիմացը Métochion(*) կ'այցելէ ու կը գրէ 1160ին թէ նոյն հաստատութիւնը Հայոց կը վերաբերի. Մար-Սաբայի վանքի նոյն սեպհականութիւնը որ յունաց կը վերաբերէր, շատ մօտ էր Եագուպիէի վանքին, չէ՞ կարելի կարծել թէ Եագուպիէի վանքը Հայոց կը վերաբերի ըսելու տեղ գրչի վրիպումով մը կամ շփոթմամբ Métochionը կը յիշատակէ իբր հայկական սեպհականութիւն, ինչ որ սխալ մ'է: Khitrowo ուսագգին իր թարգմանած Ճանապարհորդութեան մը մէջ կը գրէ թէ (էջ 325) 1558ին Պազիլ Պոսնիաքով անուն ուխտաւոր մը Մար-Ստրայի վանականները պատսպարուած կը գտնէ Ս. Միքայէլի Սերպ վանքին մէջ, Ֆրանչիսկեանց վանքին մօտ, այն պատճառաւ որ Métochionը գրաւուած էր նոյն ժամանակ: Այս ծանօթագրութիւններէն կը հասկցուի որ ԺԶ. դարու յունական վանքին հետ գրաւուած էր Եագուպիէն ալ, ինչպէս կ'ականարկէ Միւճիւր էտ-սին (✱ 1521) ևս իր Պատմութեան մէջ: Յունական նոյն վանքին տեղը այժմ անյայտ է, իսկ Եագուպիէն կը մնայ իբր մզկիթ:

(*) Métochion շինուած էր Մար-Սաբայի վանքին իբր մէկ ճիւղը, վտանգի ժամանակ Մար-Սաբայի վանականները կու գային հոն ապաստանիլ, ան ունէր ուխտաւորաց համար ընդարձակ հիւրանոց մը:

